

Դպրեվանուց) : 1896 Նոյ. 6 ին Պատրիարք Հայոց Թուրքիոյ . (Լոյս. 1905, էջ 97. Թ. 5) : 1908 ին կը հրաժարի Պատրիարքութենէ, կ'առանձնանայ ու կը պարապի գրականութեամբ. 1914 ին գարձեալ կ'սկսի իր մասնակցութիւնը քարոզչական եւ և վարչական գործերու : (Իր ընդարձակ կենսագրութիւնը տեսնել Ազգայն. Գ. էջ ՄԺԹ — ՄԻ) : 1914 ին կեդրոնական վարչութեան կողմէն շիագոր պատիրակաբեան պաշտօնով կը ղրկուի Ս. Յակոբի վանքը, ընկերակցութեամբ Վահան Թէքէեանի եւ Գէորգ Կիւրեղեանի : Յանձնարարուած էր իրեն՝ Պոլսոյ Ազգ. Ժողովի կողմէն 1913 ին խմբագրուած եւ Ս. Յակոբի վանքի միաբանութեան համար քուէարկուած կանոնադիրը գործադրելու միջոցները գտնել եւ տեղեկագրել : Թէքէեան եւ Կիւրեղեան կը մեկնին Երուսաղէմէն առանց պաշտօնի ձեռնարկելու. իսկ Մաղաքիա արքեպս. Օրմանեան կը մնայ Երուսաղէմ, իր պաշտօնը արդիւնաւորելու հոգածութեամբ. վրայ կը հասնի Ընդհ. պատերազմը եւ պետական նոր կարգադրութեանց հետեւանքով կ'ստիպուի մեկուսանալ եւ գրական աշխատութիւնները կը շարունակէ Ս. Յակոբի վանքին մէջ : 1915 ին կը հրատարակէ դիտողագիր մը 41 յօդուածներով եւ Երուսաղէմի հասարակագետներու կանոնագրին զենութիւնն եւ շուսաբանութիւնը խորագրով : Մաղաքիա արքեպս. կը պատրաստէ նաեւ Տեղագիր, Հայկական Երուսաղէմ անուամբ աշխատութիւնը, եւ Կնձիռն խորագրով Ղեւոնդ վրդ. Մագսուտեանի հաշիւներուն մէկ վերլուծումը : Երուսաղէմի անգղ. գրաւումէն առաջ Սահակ կթղ. ի եւ սինոդականներու հետ Օրմանեան Սրբազան պետական հրամանով 1917 Նոյ. 6 ին կը փոխադրուի Դամասկոս. ուր ժամանակ մը մնալէ վերջ կը վերադառնայ Պոլիս եւ կը վախճանի ինն 1918 Նոյ. 6 ին :

Բացի հայերէն բանախօսութիւններէն՝ որոնք հրատարակուած են արդէն, օտար թերթերու եւ հանդէսներու մէջ ալ գրած է զանազան յօդուածներ, որոնց անփոփոռն է .

Իր *Le Vatican et les Arméniens* գործը, Rome, Typ. Bartoli, 1873.

Իր երկասիրութիւններն են նաեւ *հետեւեալները* .

*Արոտ Հայաստանաց*, (տպ. Էջմիածին, 1886).

*Ազգայի, յուշարձան իր քրոջ՝ Տիկին Ազգայի Մ. Տ. Ներսէսեանի յիշատակին*, (տպ. Կ. Պոլիս, 1906).

*Հաւայաստւն*, (տպ. Կ. Պոլիս, 1911).